ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության բաժնի պետ,
ՀԾ 1-ին դասի խորհրդական, քաղաքական
գիտությունների դոկտոր, դոցենտ

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՁԵՎԱՉԱՓՈՒՄ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՏԴ 947.925.1+327(479.25)

Անցած տարիների ընթացքում ԵԱՀԿ-ն հանդես եկավ Արևելքի ու Արևմուտքի միջև միջազգային լարվածության թուլացման տարբեր ժամանակահատվածներում՝ դառնալով քաղաքական լայն շրջադարձերի ու վերափոխումների ամենագործուն մասնակիցն ու վկան: ԵԱՀԿ-ն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար արդեն բավական երկար ժամանակ ճանապարհներ է փնտրում: Շարունակական են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջանային այցերը, որոնց ժամանակ նրանց կողմից իրականացվում են հակամարտության ուժերի շփման գծի պարբերական հսկումներ և մշտադիտարկում: Փորձելով բավարարել հակամարտող կողմերին՝ այդ կազմակերպությունը առաջարկում է գնալ փոխզիջման գործող միջազգային նորմերին համապատասխան, որոնց դրույթներում կան ակնհայտ հակասություններ (Ազգերի ինքնաորոշման իրավունքը և Տարածքային ամբողջականությունը):

Հեղինակի կողմից եզրահանգում է արվում, որ վերջին շրջանում ԼՂ հակամարտության բանակցային գործընթացը շարունակում է մնալ ակտիվ մակարդակի վրա, ինչը, սակայն, չի հանգեցնում հակամարտության խաղաղ կարգավորման հարցում էական առաջընթացի: Հայկական կողմը շարունակում է միջնորդական գործունեության նախապատվությունը տալ ԵԱՀԿ Մինսկի խմբին: Ադրբեջանական կողմի մերժողական դիրքորոշման պատճառով միջնորդական բոլոր նախաձեռնությունները չեն հանգեցնում լուրջ գործնական քայլերի արձանագրման: Եվրոպական արժեհամակարգում «ազատությունը» իր բարձրագույն տեղն ունի, ինչը կարող է հանդիսանալ ԼՂ հակամարտության կարգավորման բանալին:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ անվտանգություն, զինված ուժեր, հակամարտություն, կողմ, բանակցություններ, ազատ ինքնորոշում, տարածքային ամբողջականություն, խաղաղություն, միջնորդական առաքելություն:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման համակարգում հատկապես կարևորվում է Ղարաբաղյան հակամարտության առանձնացված դիտարկումը և այն խաղաղ ճանապարհով հարթելու նպատակային քաղաքականությունը՝ տարածաշրջանում հեղինակավոր ուժերից կազմված Մինսկի խմբի համեմատաբար նպատակահարմար ձևաչափում: Հայաստանի զինված ուժերի խնդիրներում ընդգծված արժևորվում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության անվտանգության, անկախության և քաղաքակիրթ կեցության երաշխավորումը [1]:

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որը ամենահին և ծավալուն հակամարտություններից է նախկին ԽՍՀՄ

տարածքում, հետզհետե ավելի շատ է ձեռք բերում ձգձգված միջազգային և միջպետական խնդրի բնույթ՝ զարգացման ոչ հստակ հեռանկարներով: Սկզբնավորվելով 20–րդ դարի 80–ական թվականների վերջին (դեռևս ԽՍՀՄ քաղաքական տարածքում)՝ այն ԽՍՀՄ փլուզումից հետո ինքնաբերաբար վերածվեց երկու նորանկախ պետությունների՝ Հայաստանի և Ադրբեջանի միջպետական խնդրի:

Այստեղ տեղին է ներկայացնել Ղարաբաղյան հակամարտության ծագման մի փոքր պատմական ակնարկ: Այսպես, 1991 թվականի սեպտեմբերի 2–ին ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ) նախկին ԼՂԻՄ ու Շահումյանի շրջանի սահմաններում: Ընդունվեց ԼՂՀ անկախության մասին հռչակագիրը (դեկլարացիա): Նման քայլով իրականացվեց մի իրավունք, որն արտացոլված էր այն ժամանակ գործող օրենսդրության մեջ, մասնավորապես 1990 թվականի ապրիլի 3–ի՝ «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքում, որը նախատեսում էր ազգային ինքնավարություններին իրավունք տրամադրել ինքնուրույն կերպով որոշելու սեփական պետաիրավական կարգավիճակը՝ ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում: Այդ նույն ժամանակահատվածում (1991 թվականի նոյեմբերին), ի հակադրումն բոլոր իրավական նորմերի, Ադրբեջանի Գերագույն խորհուրդը ընդունեց ԼՂԻՄ–ի լուծարման մասին օրենքը, որը ԽՍՀՄ Սահմանադրական դատարանի կողմից որակվեց որպես ԽՍՀՄ Սահմանադրությանը հակասող ակտ:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատմության մեջ շրջադարձային եղավ 1988 թվականը, երբ Արցախի ժողովուրդը ձայնը բարձրացրեց սեփական իրավունքների ու ազատության պաշտպանության օգտին: Հետևելով գործող բոլոր իրավական նորմերին և օգտագործելով կամքն արտահայտելու բացառապես ժողովրդավարական ձևեր՝ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը հանդես եկավ Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջով: Այդ իրադարձությունները բեկումնային եղան ոչ միայն արցախցիների կյանքում. դրանք, փաստորեն, նախասահմանեցին ողջ հայ ժողովրդի հետագա ճակատագիրը: 1988 թվականի փետրվարի 20–ին ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց, որն իր մեջ պարունակում էր դիմում՝ ուղղված Ադրբեջանի Գերագույն խորհրդին՝ նրա կազմից դուրս գալու մասին, Հայաստանի Գերագույն խորհրդին՝ նրա կազմի մեջ մտնելու մասին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ այդ դիմումը բավարարելու մասին, հիմնվելով իրավական նորմերի ու ԽՍՀՄ–ում նմանատիպ վեճերի լուծման նախադեպերի վրա:

1991 թվականի դեկտեմբեր 10–ին՝ Խորհրդային Միության պաշտոնական անկումից ընդամենը մի քանի օր առաջ, Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցավ հանրաքվե, որի ընթացքում ազգաբնակչության ճնշող մեծամասնությունն արտահայտվեց Ադրբեջանից լրիվ անկախանալու օգտին: Դրան հետևած խորհրդարանական ընտրություններում ընտրվեց ԼՂՀ խորհրդարան, որն էլ կազմեց առաջին կառավարությունը: Անկախ ԼՂՀ կառավարությունն իր պարտականությունների իրականացմանն անցավ բացարձակ շրջափակման և նրան հետեւած Ադրբեջանի ռազմական ագրեսիայի պայմաններում:

Օգտագործելով իր տարածքում կենտրոնացված ԽՍՀՄ զինված ուժերի 4–րդ բանակի զենքն ու զինամթերքը՝ Ադրբեջանը լայնածավալ պատերազմական գործողություններ սկսեց Լեռնային Ղարաբաղի դեմ: Այդ պատերազմն, ինչպես հայտնի է, փոփոխական հաջողություններով 1991 թվականի աշնանից շարունակվեց մինչև 1994 թվականի մայիսը: Եղան պահեր, երբ ԼՂ տարածքի գրեթե 60 տոկոսը գրավված էր, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտն ու մյուս բնակավայրերը գրեթե անդադար հրետակոծումների ու ռմբակոծումների էին ենթարկվում:

1992 թվականի մայիսին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը կարողացան ազատագրել Շուշի քաղաքը, միջանցք «բացել» Լաչին քաղաքի շրջանում՝ հնարավորություն ստեղծելով վերամիավորել ԼՂՀ և Հայաստանի տարածքները, դրանով իսկ մասնակիորեն վերացնելով ԼՂՀ երկարամյա շրջափակումը: Նույն թվականի հունիս–հուլիս ամիսներին ադրբեջանական բանակին հաջողվեց գրավել ԼՂՀ ամբողջ Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանի մեծ մասը, Մարտունու, Ասկերանի և Հադրութի շրջանների մի մասը:

Ադրբեջանի ագրեսիային դիմակայելու նպատակով ԼՂՀ կյանքն ամբողջովին տեղափոխվեց ռազմական հուն. 1992 թվականի օգոստոսի 14–ին ստեղծվեց ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտե, իսկ ինքնապաշտպանության անջատ ջոկատները վերաձեւավորվեցին և ամուր կարգապահության ու միահրամանատարության հիմունքներով կազմեցին Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակը: ԼՂՀ Պաշտպանության բանակին հաջողվեց ազատագրել Ադրբեջանի կողմից ավելի վաղ շրջանում ԼՂՀ գրավված տարածքները, մարտական գործողությունների ընթացքում գրավելով նաեւ հանրապետությանը սահմանամերձ, կրակակետերի վերածված ադրբեջանական մի շարք շրջաններ: Հենց անվտանգության այդ գոտու ստեղծմամբ էր, որ կանխվեց խաղաղ ազգաբնակչության անմիջական սպառնալիքի հնարավորությունը: Իսկ 1994 թվականի մայիսի 5–ին Ռուսաստանի, Ղրղստանի և ԱՊՀ Միջխորհրդարանական ժողովի միջնորդությամբ Ղրղստանի մայրաքաղաք Բիշքեկում Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը ստորագրեցին Բիշքեկյան արձանագրությունը , որի հիման վրա մայիսի 12–ին այդ նույն կողմերը պայմանավորվեցին կրակի դադարեցման շուրջ, որը գործում է մինչ այսօր:

Միջազգային հանրության անունից Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ փաստացի լիազորված էր զբաղվել ԵԱՀԽ–ն, որը մինչ այդ նման գործունեությամբ չէր զբաղվել և այդ ժամանակ կարող էր օգտագործել Ղարաբաղյան հակամարտությունը՝ նմանատիպ հիմնախնդիրների լուծման բնագավառում իր հեղինակությունը ապացուցելու նպատակով: ԵԱՀԽ–ի գործունեությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում ընդունված է կապել Մինսկի խմբի գործունեության հետ, որը տարբեր գնահատականների է արժանացել: Մինսկի խումբը ստեղծվեց այնպիսի պայմաններում, երբ Իրանի նախաձեռնած միջնորդական առաքելությունն արդեն որոշակի առաջընթաց էր արձանագրել:

ՄԽ–ի ստեղծմամբ ու գործունեությամբ աշխարհի առաջատար դերակատություն ունեցող երկրները, իրենց տարակարծություններով հանդերձ, կարողացան հաստատվել բնական պաշարներով հարուստ Արևմուտքի և Արևելքի խաչմերուկներում գտնվող կասպիական տարածաշրջանում: Չնայած 1992 թվականի հունվարի 30–ին Հայաստանը և Ադրբեջանը դարձան ԵԱՀԽ–ի անդամ-

ներ և ԵԱՀԽ գործող նախագահին խնդրեցին պատվիրակություն ուղարկել տարածաշրջան՝ ԼՂՀ հիմնախնդրի լուծման ուղիներն ուսումնասիրելու նպատակով, սակայն միջազգային հանրության ներգրավմանը Ադրբեջանը հենց սկզբից բացասաբար արձագանքեց, քանզի Ղարաբաղյան խնդիրը համարում էր Ադրբեջանի ներքին գործը՝ պնդելով, թե Ադրբեջանն ինքը պետք է լուծի այդ հարցը:

Այլ էր Հայաստանի դիրքորոշումը, որը հիմնախնդրի միջազգայնացումը դիտում էր որպես դրա լուծման պարտադիր նախապայման՝ շեշտը դնելով մարդու իրավունքների պաշտպանության և ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքների վրա: Ղարաբաղյան կողմը հիմնախնդրի միջազգայանացումը դիտում էր միջոց՝ միջազգային հանրության ուշադրությունը ԼՂ–ում տիրող ողբերգական իրադարձություններին սևեռելու համար: ԼՂՀ իշխանությունները հարցի միջազգայնացմամբ փորձում էին հասնել ապաշրջափակման, արտաքին աշխարհի հետ կապի հաստատման և վերջնարդյունքում անկախության հաստատման՝ հիմնվելով ՄԱԿ–ի կանոնադրությամբ ու ԵԱՀԽ–ի Հելսինկյան եզրափակիչ ակտով նախատեսված ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի վրա:

Ղարաբաղյան հակամարտության մեջ ներգրավված կողմերի դիրքորոշումների իրարամերժության պայմաններում՝ ԵԱՀԽ–ն, առանց հապաղելու, օգտագործեց առաջին իսկ հնարավորությունը և հանձն առավ հիմնախնդրի լուծման նախաձեռնությունը: 1992 թվականի փետրվարի 12–18–ը ԵԱՀԽ գործող նախագահի հանձնարարությամբ կազմակերպության պատվիրակությունն այցելեց Հայաստան, Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ, որից հետո զեկույց ներկայացրեց տարածաշրջանում ստեղծված իրավիճակի մասին [2]:

Այդ ժամանակաշրջանում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման տարբերակներ էին առաջարկել ոչ միայն միջազգային միջնորդները, այլև գիտական շրջանակների ներկայացուցիչները: Օրինակ, առաջարկված տարբերակներից մեկի հեղինակն է ԱՄՆ–ի պետդեպարտամենտի նախկին աշխատակից Փոլ Գոբլը, համաձայն որի՝ Ղարաբաղը մնում էր Ադրբեջանի կազմում, իսկ Հայաստանը դեպի Ղարաբաղ ելք էր ստանում Լաչինի միջանցքով: Բայց դրա փոխարեն Ադրբեջանին էր անցնում Մեղրիի միջանցքը, և Ադրբեջանը ելք էր ստանում դեպի Նախիջևան: Այդ և նման առաջարկները չի կարելի լուրջ ընդունել, քանի որ դրանք միանշանակ անընդունելի են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի համար:

ԵԱՀԿ ղեկավարությունը և տարբեր մարմիններ իրենց մշտական ուշադրության կենտրոնում են պահել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը: Դեռևս 1992 թվականի մարտին ԵԱՀԽ–ի՝ Հելսինկիում տեղի ունեցած Նախարարների խորհրդի նիստում ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ ընդունվեց որոշում՝ հրավիրել կոնֆերանս Մինսկում: Կոնֆերանսի նախագահ նշանակվեց Իտալիայի ներկայացուցիչ Մարիո Ռաֆաելին: Խաղաղության այդ համաժողովը, որը պետք է գումարվեր Մինսկում և հրավիրեին ԼՂ ընտրված ու այլ ներկայացուցիչներ, կոչված էր լուծումներ գտնելու հակամարտությանը: Հետագայում միջազգային հանրությունը այս կոնֆերանսի կազմակերպման տեղի անունով գործընթացն ու ընդգրկված պետություններին կոչեց Մինսկի խումբ:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման առաջին սկզբունքը Հայաստանի և Ադրբեջանի տարածքային ամբողջակության ապահովումն էր, երկրորդ սկզբունքը՝ համաձայանգրով ամրագրված Լեռնային Ղարաբաղի այնպիսի

կարգավիճակն էր, որը հիմնված կլիներ Ադրբեջանի Հանրապետության կազմում ԼՂ–ին ամենաբարձր աստիճանին ինքնավարություն ապահովող ինքնորոշման վրա: ԵԱՀԿ Գործող նախագահի հայտարությանը մեկտեղ լիսաբոնյան հանդիպման փաստաթղթերում ներառվեց Հայաստանի պատվիրակության հայտարարությունը, որտեղ մտահոգություն էր արտահայտված այն առնչությամբ, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահի հայտարարությունը չի արտացոլում Մինսկի խմբի մանդատի ոգին, ինչը ենթադրում է բանակցություններ քաղաքական համաձայնության հասնելու նպատակով:

Կարգավիճակի հիմնախնդիրը քննարկման առարկա է եղել ուղիղ բանակցությունների ընթացքում, որոնք դեռ չեն ավարտվել: Նշվում է, որ Գործող նախագահի հայտարարությունը կանխորոշում է ԼՂ կարգավիճակը, ինչը հակասության մեջ է մտնում ԵԱՀԿ Նախարարների խորհրդի 1992 թվականի որոշման հետ, որը այդ հարցը վերապահել էր ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսին: Հայկական կողմը համոզմունք է արտահայտում, որ հիմնախնդրի լուծումը կարող է գտնվել միջազգային իրավունքի և ԵԱՀԿ հելսինկյան Եզրափակիչ ակտում ամրագրված սկզբունքների հիման վրա ու, նախևառաջ՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի: ԵԱՀԿ լիսաբոնյան գագաթաժողովում հակամարտության կարգավորման այդ բանաձևն իր հիմքում ուներ նաև հիմնախնդրի բնույթի մասին անբացահայտ կանխադրույթներ, քանի ԵԱՀԿ–ն, առանց խնդրի պատմաքաղաքական և իրավական հիմքերին մանրամասն ծանոթանալու, Լեռնային Ղարաբաղը դիտում էր Ադրբեջանին պատկանող տարածք, ինչը միանշանակ անընդունելի մոտեցում էր [3]:

Մեջբերման ձևով հարկ է նաև փաստել, որ Ադրբեջանի և Վրաստանի ներկայիս Սահմանադրությունները չեն ներառում էթնիկական փոքրամասնությունների ինքնորոշման օրենսդրական նորմեր: Իրենց սահմանադրական օրենքներով այդ պետությունները միանման են և նախկին խորհրդային ինքնավար հանրապետությունների՝ Աբխազիայի, Հարավային Օսեթիայի (Վրաստանի Սահմանադրության 1–ին գլխի 2–րդ հոդվածը [4]) և Լեռնային Ղարաբաղի (Ադրբեջանական Հանրապետության Սահմանադրության «Պետության հիմք» վերտառությամբ 2–րդ գլխի 7–րդ և 11–րդ հոդվածները [5]) բնակչությանը գործնականում թույլ չեն տալիս բնակչության շրջանում հայտ ներկայացնելու՝ իր ներկայիս բնակության վայրերում ինքնորոշման հանրաքվեներ անցկացնելու վերաբերյալ: Հայաստանի դիրքորոշումները ամենապարզ կերպով կարելի է ներկայացնել, որ հակամարտության կարգավորումը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմք պետք է հանդիսանա Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման ճանաչումը, ԼՂ–ն Հայաստանի հետ պետք է ունենա հայկական կողմի իրավազորության տակ գտվող անխափան ցամաքային կապ, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգությունը պետք է միջազգայնորեն երաշխավորված լինի: Այս սկզբունքների ընդունումն ու պայմանագրային ամրագրումը հնարավորություն կընձեռի հասնել հիմնախնդրի համալիր կարգավորմանը:

Արդարացի է մասնագետների կողմից Ղարաբաղյան հակամարտության համեմատականների անցկացումը Կոսովոյի հակամարտության հետ: Այդ համեմատականների ուսումնասիրությունը նաև կարող է հետաքրքրական լինել այն փորձագետների և քաղաքական գործիչների համար, որոնք փորձում են նմանություններ գտնել Հարավային Կոսովո-

յում հակամարտային իրավիճակների և Կոսովոյում ՄԱԿ–ի անվտանգության խորհրդի որոշումների լույսի ներքո ՄԱԿ–ի և ԵԱՀԿ–ի կողմից Կոսովոյում ՄԱԿ–ի ժամանակավոր առաքելության ու ԵԱՀԿ–ի առաքելության միջոցով գործարկված ինքնորոշումային գործընթացների միջև [6]: Ելնելով այն մոտեցումից, որ համաշխարհային արժեհամակարգում «ազգերի ինքնորոշման իրավունքը» իր բարձրագույն տեղն ունի, վերոնշյալ օրինակով կարելի է և միջազգային հանրությունը պետք է նախաձեռնի Ղարաբաղյան և նմանօրինակ մյուս հակամարտությունների արդարացի կարգավորման կառուցակարգերի առաջարկումը կողմերին ու իրագործումը:

Որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի) բնակչության անվտանգության երաշխավորի՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մեջ Լեռնային Ղաարաբաղի հակամարտության խաղաղ և արդար կարգավորման խնդիրն ունի առանցքային նշանակություն: Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն աջակցելու առաքելությունը կողմերի համաձայնությամբ վստահվել է ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ Ռուսաստանի, ԱՄՆ և Ֆրանսիայի համանախագահությամբ: Հայաստանի Հանրապետությունը կարևորում է խնդրի կարգավորման շուրջ ծավալվող քննարկումների մասնակիցների փորձագիտական բարձր մակարդակը: Հայաստանի Հանրապետությունը նպատակահարմար չի համարում խնդրի կարգավորման վերաբերյալ այլ կառույցների կողմից հայտարարությունների քննարկումն ու ընդունումը, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների ներգրավումը կարգավորման գործընթացներին: Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է հակամարտության կարգավորմանը միայն խաղաղ և փոխզիջումային ճանապարհով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման իրավական հիմքերն անխոցելի են: Մշտապես ելնելով այն սկզբունքից, որ ցանկացած վերջնական համաձայնություն կամ վերջնական փաստաթուղթ պետք է ստանա նաև ղարաբաղյան կողմի հավանությունը, Հայաստանն ընդունելի է համարում կարգավորման միայն այն տարբերակները, որոնք ուղղված կլինեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստացի գոյության անշրջելի իրողությունն ամրագրելուն [7]:

Չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում հակամարտության կարգավորման միջազգայնորեն ընդունված ձևաչափով տարվող բանակցություններին և դրանք Մինսկի գործընթացի շրջանակներում ընթանալու պայմանավորվածություններին՝ Ադրբեջանը, խեղաթյուրելով հակամարտության էությունն ու հետևանքների բուն պատճառները, նաև փորձեր է ձեռնարկում հակամարտության կարգավորման մեջ ներքաշելու այլ միջազգային կազմակերպությունների ու բանակցային գործընթացը խոչընդոտող և քարոզչական նպատակներ հետապնդող զուգահեռ գործընթացներ է նախաձեռնում մասնավորապես ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայում ու Եվրոպայի խորհրդում:

Ադրբեջանի վարած ռազմատենչ ագրեսիվ քարոզչությունը ևս կասկածի տակ է դնում փոխզիջումային կարգավորման հասնելու Ադրբեջանի ցանկությունը, հայտարարությունները, ստանձնած հանձնառություններն ու դրանց լրջությունը: Անտեսելով զինադադարի մասին եռակողմ համաձայնությունը, Ադրբեջանը մինչ օրս չի դադարում գնդակոծել ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության սահմանները: Եվ պատահական չէ, որ Ադրբեջանի իշ-

խանությունները բացահայտ մերժում են միջնորդների՝ դիպուկահարներին շփման գծից հեռացնելու և միջադեպերի հետաքննման մեխանիզմներ ստեղծելու առաջարկները, նույնիսկ հրաժարվում են 2012 թվականին Սոչիում իրենց իսկ կողմից ստորագրված հայտարարությամբ ստանձնած վստահության ամրապնդման միջոցառումներն իրագործելուց [8]: Ադրբեջանը նավթային եկամուտներից ստացված գումարները շարունակում է ուղղել ռազմական բյուջեի ավելացմանը և մեծ քանակությամբ հարձակողական սպառազինությունների ձեռքբերմանը՝ կոպտորեն ոտնահարելով անվտանգության ու ռազմաքաղաքական ոլորտի մի շարք համաձայնագրեր և պարտավորություններ:

Այստեղ հարկ է ընդգծել, որ հիմնախնդրի կարգավորման ռազմաքաղաքական գիտավերլուծական հենքի ստեղծմանն ուղղված հայ քաղաքագետների ջանքերը հիմնականում հանգում են այն հետևության, որ Կոսովոյում և նմանատիպ մյուս հակամարտություններում ՄԱԿ–ի և ԵԱՀԿ ժամանակավոր առաքելությունների դասերի ու փորձի օգտագործմամբ կարելի է լուծել նաև Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունները՝ իհարկե, որպես խնդրի հարթման ճանապարհ ընտրելով ինքնորոշման իրավունքի արձանագրումը այդ ժողովուրդների շրջանում անցկացվող հանրաքվեների միջոցով [9]:

Ըստ էության, Ադրբեջանը տապալում է նաև կողմերի միջև վստահության ամրապնդմանն ուղղված տնտեսական, քաղաքական, ռազմական ու մարդասիրական բնույթի բոլոր նախաձեռնությունները: Մասնավորապես, Ադրբեջանը մերժում է տարածաշրջանային համագործակցություն ծավալելու հայկական կողմի և շփման գծից դիպուկահարների հետքաշման Մինսկի խմբի համանախագահների կատարած առաջարկությունները: Եվ իհարկե, որպես եզրահանգում ընդգծվում է, որ Ղարաբաղյան հակամարտության մասին խոսելիս հարկավոր է հակամարտությունը դիտարկել տարածաշրջանային և միջազգային զարգացումների շրջանակներում: Անհրաժեշտ է նշել նաև, որ ընդհանուր առմամբ Արևմուտքը ձգտում է Հարավային Կովկասի տարածաշրջանում ձևավորել այնպիսի հաստատություններ և ներդնել այնպիսի համակարգ, որը կնպաստի տվյալ տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացների հաստատուն զարգացմանը: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն այսօր հանդիսանում է տարածաշրջանի ամենակարևոր նման գործոններից մեկը, որը կարող է ապակայունացնել ողջ տարածաշրջանը՝ չնայած հակամարտության հարցում status–quo–ի ցանկացած փոփոխություն կարող է դրականորեն ազդել հայ–թուրքական հարաբերությունների վրա, որն էլ իր հերթին լավ հնարավորություններ կստեղծի Հարավային Կովկասում ինտեգրացիոն ծրագրերի համար:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 24.01.2014թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 20–րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ, 27.01.2012թ., http://www.mil.am/1327666346/page/35
2. Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991–1994 թվականներին, Եր., 2004, էջ 54
3. Մանասյան Ա., Ղևոնդյան Ա., Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել, Եր., 2010թ., էջ 155–156

4. http://members.tripod.com/ggdavid/georgia/const8.htm
5. http://www.constitutional–court–az.org/const–chapter2.htm
6. Հարավային Կովկասում էթնիկական հակամարտությունները. տարաձայնություններ և տարածաշրջանային հակասությունների բանալին // Քոթանջյան Հ.Ս., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 663:
7. ՀՀ Նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007, 3–րդ գլուխը
8. ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ՀՀ պաշտպանության նախարարությունում տեղի ունեցած ընդլայնված նիստում, 15.01.2013թ., http://www.president.am/hy/statements–and–messages/item/2013/01/15/President–Serzh–Sargsyan–speech–session–Ministry–of–Defense/
9. Հարավային Կովկասի պետությունների ինտեգրումը եվրատլանտյան հանրությանը. մոտեցումների առկա հակասությունների հաղթահարում // Քոթանջյան Հ.Ս., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 681:

SOME CONSIDERATIONS ABOUT KARABAKH CONFLICT SETTLEMENT IN THE FORMAT OF THE MINSK GROUP

TIGRAN KOCHARYAN

Head of the Branch of the Law Department of the Ministry of Defence of RA, 1–st Class Adviser, Doctor of Political Sciences, Associate Professor

The separated monitoring of the Nagorno–Karabakh conflict and the intended policy for peaceful regulation are very important in the system of providing national security of the Republic of Armenia in more acceptable format of the Minsk Group. During the regional visits of the Minsk group co–chairs are being realized regular controlling and monitoring the contact line of the conflicting forces. Tryaing to satisfy the conflicting parties, the Minsk Group offers a compromise according to the international norms, in which are some obvious discrepancies (The right of nations to self–determination and The territorial integrity). Recently, the regulation process of the Nagorno–Karabakh conflict remains in the active level, which, however, does not lead to substantial progress in the peace process. The Armenian part keeps giving priority of the intermediary activity to the OSCE Minsk group. Because of the negative position of the Azerbaijan part all intermediary initiatives are not leading to serious practical results. The freedom has the main place in the European value system, which can be the key for the regulation of the Nagorno–Karabakh conflict.

Article submission date: 24.01.2014

НЕКОТОРЫЕ СООБРАЖЕНИЯ О РАБОТЕ МИНСКОЙ ГРУППЫ ПО УРЕГУЛИРОВАНИЮ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

КОЧАРЯН ТИГРАН

Начальник отдела юридического управления Министерства обороны РА, Советник 1–ого класса, доктор политических наук, доцент

В системе национальной безопасности Республики Армения особенно подчеркивается отдельное рассмотрение нагорно–карабахского конфликта и целевая политика по мирному регулированию конфликта в более приемлимом формате Минской группы. В ходе региональных посещений соопредседателей группы осуществляются регулярный контроль и мониторинг линий соприкосновения противоборствующих сил. Пытаясь удовлетворить конфликтующие стороны Минская группа предлагает пойти на компромисс в соответствии с существующими международными нормами, в которых есть очевидные противоречия (право на самоопределение наций и территориальная целостность). В последнее время переговорный процесс нагорно–карабахского конфликта продолжает оставаться на активном уровне, который, однако, не приводит к существенному прогрессу в мирном регулировании конфликта. Армянская сторона продолжает уделять приоритетное внимание посреднической деятельности Минской группы ОБСЕ. Из–за негативного отношения азербайджанской стороны все посреднические инициативы не приводят к фиксированию практических результатов. В европейской ценностной системе “свобода” имеет особенное место, которая послужит основным ключом к регулированию нагорно–карабахского конфликта.

Дата представления статьи: 24.01.2014г.